

Լ.Չ.ԳԼՅԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Ազգային վարչութիւնն ասկէց առաջ թէքիրտաղի Առաջնորդական խնդրոյն վրայ ըրած քննութեան արդիւնքէն տեղեկանալով որ Արժ. Եղիսիկ վարդապետ յանձնարար ամբաստանուած և նախատուած էր տեղւոյն ազգայնոց մէջ մասէն, անպարտ ճանչցաւ զինքն իւր առաջնորդական պաշտօնին մէջ, և այն անձիւք՝ որ Սահմանադրութեան և օրինաւորութեան դէմ վարուելով՝ յիշեալ վարդապետին կրած նախատանաց պատճառ և հեղինակ եղած էին, պատասխանատու համարելով, ապագային վերապահեց անոնց արժանաւոր հատուցումն եթէ միւս ևս անգամ համարձակին կրկնել իրենց հակասահմանադրական և ապօրինի վարմունքն ազգային գործոց մէջ, վարչութիւնն այսպէս վարուիլ այս անգամու համար պատշաճ դատեց, որովհետեւ Արժ. Եղիսիկ վարդապետն իւր առաջնորդական պաշտօնին մէջ անբարձր գտնուելը պաշտօնապէս ըստուգուած և հաստատուած ըլլալը բաւական համարելով, խաղաղասիրութեան համար կամովին իւր առաջնորդական պաշտօնէն հրաժեշտ տուաւ, և իւր հրաժարականն ընդունուելով նոյն վիճակին նոր առաջնորդի ընտրութեան հրահանգ տրուելն որոշուեցաւ:

16 ապրիլ 1875

Ի Պատրիարքարան Հայոց
Կ. Պոլիս

Մեղու Հայաստանիտէ աթիւնէքի հաւատարմէր օգուանուլ տուր:

Պարոն Ս. Լաւայեանցը մեզ հաղորդում է Ալեքսանդրապոլից, որ ամիս 12 ին նոյն քաղաքի հասարակութիւնը զրկուել է իւր մի արժանաւոր և օգտաւէտ անդամից, այն է աղնուական Սիրական աղա Գորգիսանցից: Հիմաուցեալը համակրելով ազգային ուսումնաշնորհին, մանաւանդ օրինորդաց զբարոյնքին, հասկանալով թէ Հայերն աւելի անձ կարօտութիւն ունին լաւ մայրերի, կտակել է իշխ. Արդութեան օրինորդաց ուսումնարանին 1000 ուրբէի և Սահականուչեան դպրոցին 200 ուրբացի սորանից բաժին է հանել աղա քատայ 50 ուրբէի:

Հանգուցելոյ յուղարկաւորութիւնը կատարել է ամիս 15 ին ժողովրդեան խումուն բաղմութեան և յիշեալ ուսումնարանների բոլոր աշակերտահիւնքերի ներկայութեամբ:

Անցեալ օրերը թիֆլիսում մի սարտախելի և տարօրինակ դիպուած պատահեցաւ: Մի Հոյ կաթողիկէ արհեստաւոր կացնով մաս մաս է արել իւր կնօջը: Ասում են, որ դորա պատճառը կնօջ անհաստատութիւնն է եղել: Ասում են թէ չարաբործը երբ ուղքի է եկել՝ ուղեցել է ջուրն Էնիւնել, բայց բռնել են և յանձնել ոստիկանութեան:

Պարոն Բլ. Ախալցխայից հաղորդում է մեզ:

Մարտի 12ին դիշերը բերդումը զբաղուած Ռուսաց եկեղեցին կողոպտած են և թէ առձեռն փողով և թէ սրբաբազան անօթներով բաւական վնաս տուած են: Ասում են որպէս թէ գողերը բռնուած և խոտովանեցան իրանց յանցանքը: Ասում են նոյնպէս թէ այդ գողերը բերդի ղինուարա-

հաններից են եղել եկեղեցւոյ ժամակրչի ընկերակցութեամբ:

Պարոն Բլնունին հաղորդում է Ախալցխայից:

Յօգուտ փոքր-Ասիայ ստիտանը եղբարց ժողոված գումարի թիւն հասել է մինչև այսօր Ախալցխայի մէջ միմիայն՝ թէ քահանայից և թէ քաղաքացեաց ձեռքով 280 ր. — Ինչպէս յայտնի է ձեռք, այդ նպատակի համար 80 ր. ևս ժողովուած է թատրոնաւորների խմբի ձեռքով: Ուրեմն մինչև այսօր ժողոված գումարը լինում է 360 ր.: Ժողովարարութիւնը տակաւին չարունակվում են:

Մեզ հաղորդում են, որ թիֆլիսի Նորաշէնու Սբ. Աստուածածնայ եկեղեցւոյ արժ. Տէր Սրապիմոն Առաք. քահանայ Տէր Մովսիսեանցի և նոյն եկեղեցւոյ երեցիօխան պ. Ս. Ստեփանեանցի ձեռքով հաւաքուած է իւր ժողովրդականներէ 98 ու 50 կ. փոքր Ասիայի Հայ սովալուկներին համար:

Մեզ հաղորդում են թէ Լաւից, որ այնտեղի բարեկարգէլ Գէորգ առաք. քահանայ Տէր Սարգսեանցը վիճակալին կոնսիստորիայի հրամանով հրաւիրել է ժողովուրդը օժանդակութիւն անելու: Փոքր-Ասիայի Հայ սովալուկներին: Ժողովուել է 205 ու 94 կ.:

ՆԱՄԱԿ ԴԱՄԻԼԵՓԻՑ

Ներկայ 1875 ամի «Մշակ» լրագրի Ն. 10ում կարդացուեցաւ Դամիլեփից գրուած մի նամակ Մ. Ն. ստորագրութեամբ: Սովորական երեւոյթ է դառել հայերի մէջ, առաջին անգամ գրական ասպարէզը դուրս գալու ժամանակ, անպատճառ պախարակել մի անձնաւորութիւն, կամ աղաւաղել ճշմարտութիւնը:

Որովհետեւ Պաշտօնաւոր Եղիսիկ քրիստոնեայ ազգ առաջին տեղն են բռնում հայերը, և ինչպէս ասում է յօդուածագիրը — եւրոպացիք կրօնի խտրութեան պատճառաւ, չըկարողանալով ընտանեկան յարաբերութիւնը ունենալ պարսիկների հետ, դիմեցին հայերին, ուստի և հայերի մասամբ պէտք է ենթարկուէին եւրոպացւոց ազդեցութեան: Մանաւանդ որ — ինչպէս ասում է Գօբինօ Պարսկաստանի մէջ եղած եւրոպացիները այնպիսի մարդիկ չեն, որ կարողանան պատիւ բերել եւրոպայի անուան: Բայց պէտք է ասել, որ Դամիլեփից հայք աւելի են թարկուեցին այդ ազդեցութեան, քան պարսկահայքը: Եւրոպացիների ապօրինաւոր ամուսնութիւնը հայ կանանց հետ ի սկզբան ծագումն է աւելի Սալմասից: 18... թուին... Դիւսպանը տեսնելով Պարսկաստանի ընտանեկան փախուած կեանքը, որոնք տուաւ թեհարանի, Սպահանու և Համադանի հայերի մէջ մի անգուսի կին, այդ բանը իրեն Պարսկաստանի հայերի մէջ չըյաշտելով, նա մարդ ուղարկեց Ասորպատական գաւառը, ուր վերջապէս Սալմասը առաջին օրինակը տուաւ այդպիսի մի ապօրինաւորութեան, երկու աղջիկ յղելով գեապանին, որոց մէկն ինքն պահեց, իսկ միւսը իւր փոխանորդը:

Հետզհետէ եւրոպացիք բարձրանալով, Դամիլեփից մէջ անգուսի կին պահելը հայերից սովորութիւն դառաւ: Այդ անբարոյականութեան մեծ պատճառը, որ մի հասարակական հակապատկեր է ներկայացնում հայի այնքան գոված պարկեշտութեան դէմ, աղքատութիւնն է: Անպատկերիցը դը-

նալով եւրոպացուն, արձակուելէն ըզկին, նորանից ստանում է մի բաւականին գումար, երբեմն տուն, կահկարասիք և այլն: Բայց պ. Մ. Ն. ը կամենալով իւր գրուածին աւելի ազդուութիւն տալ, ասում է թէ «Հայոց հոգեւոր կառավարութիւնը արդեւից սաստիկ, որ հայերը օտարների հետ խնամութիւն չանեն, ամեն զգուշութեամբ հսկեց, որ այդ ապօրինաւոր ամուսնութիւնից ծնած զաւակները հայոց եկեղեցւում մկրտուին և հայոց դաւանութեան պատկանեն»: Բոլորովին սխալ է. նախորդ հոգեւոր կառավարութիւնը ամենեւին այդպիսի միջոցներ ձեռք չեն առած, և թէ և պատահել է, որ այլապէս քահանայ չը գտնուեւրու աղաքաւ այդպիսի զաւակները հայոց եկեղեցւում են մկրտուած, բայց բոլորեցուն յայտնի է, որ նոքա մեծացած ժամանակ դարձեալ ընդունել են իւրեանց հօրերի դաւանութիւնը: Եթէ նախորդ հոգեւոր կառավարութիւնը ձեռք առած լինէին «ազգու միջոցներ» այժմ Դամիլեփից հայ հասարակութիւնը չէր ընկղմիլ այնքան անբարոյականութեան մէջ, և այժմ դիւրին կը լինէր կտրել նորա շառաւիղները և արժատախիլ առնել, եթէ արդէն արմատները այնքան զորացած չը լինէին:

Յոբեան Սրբազանի ժամանակ մի յոյն, որ ունեցել էր մի զաւակ այդպիսի մի ապօրինաւոր ամուսնութիւնից մի հայ կնոջ հետ, կրկին անգամ մկրտել տուաւ նորան յոյն քահանայի ձեռքով, ասանց որ հոգեւոր կառավարութիւնը լուրջ աներ արգելել այդ կրկնամկրտութիւնը: Թէ և ցաւալի է, որ այդպիսով հայերի ընտանեկան յարաբերութիւնը բարոյական մեծ հարստանք են կորսւում: Միւս կողմից և շատ ուրախալի չէ, որ հայ ազգը այդպիսի անհարաղատ զաւակներ ունենայ իւր մէջ, ինչպէս պարծենում է պ. Մ. Ն. ր ասելով թէ հայ եկեղեցւում են մկրտվում:

Պ. Մ. Ն. գովելով նախորդ առաջնորդների այդպիսի դէպքերում բռնած ուղղութիւնը, իրիստ ցաւում է, որ այժմեան վիճակաւոր Անդրէաս սրբազանի օրով հայոց հոգեւոր կառավարութիւնը բոլորովին շեղուել է իւր ուղղութիւնից: Եւ իբրեւ ապացոյց նա յառաջ է բերում մի դէպք, այն է Է. Գ. եւրոպացոյ աղջկայ մի հոյ տղի հետ նշանուելը և ապա նշանը յետ դարձնելը: Պ. Մ. Ն. աւելի անձնական կրքից քան ճշմարտութիւնից շարժուած, զբարոյաւորութիւնը կաշառակերութեան ծանր յանցանքով մի ազգային գլուխ, մի առաջնորդ, որին Դամիլեփից հայ ժողովուրդը մեծ երախտագիտութեամբ պարտաւոր է, և իւր զբարոյութիւնը միայն անձնական թշնամութիւնից է ծագած, վասն զի Է. Գ. ի աղջկայ հետ նշանվող երիտասարդը իւր անդամիկի կղբային է:

Այժմ, Է. Գ. եւրոպացին իւր աղջիկը նշանել էր մի հայ երիտասարդի հետ: Թէ և Է. Գ. ի կինը հայ է և հայ դաւանութիւնն ունէ, ու իր աղջիկը և միւս զաւակները հայ եկեղեցւում են մկրտուած, բայց այդ չէր արգելում որ Է. Գ. իւր զաւակները կրթէր բողոքական կրօնի մէջ: Նա իւր երկու տղայքն արդէն մանկութիւնից ուղարկել է Զուիցերիա, և իւր այդ նշանուած աղջիկը փոքր հասակից դատարարակիւ է Ռւրմիլոյ բողոքականների դպրոցում: Ուստի շատերը զարմային

և հայերի մեծ մասը չը հաւանեցին այդ խնամութեան, մանաւանդ որ նոյն իսկ նշանուած ժամանակ աղջիկը միշտ յաճախում էր բողոքականների ժողովարանը: Հայերի անհաւանութիւնն այն մասին էր, որ աղջիկը մի եւրոպական ձեռք կրթուած օրինորդ, չէր կարող վարուել մի անկիրթ և անգիտութիւնաւոր հայ տղի հետ: Ումանք մինչև անգամ ասային, որ տըղայն այն պայմանաւ է ձեռք բերել հօր յօժարութիւնը, որ Ղարաղալի մէջ մի քանի բողոքականների դպրոց բանայ...

Այդ երկու տարի էր, որ աղջիկը նշանուած էր, և թէ և հայրը ամեն ժամանակ ստիպում էր պսակուել, բայց տղան զմաղան պատճառներով յետաձգում էր: Եւ որովհետեւ Պարսկաստանի մէջ ամօթ է համարվում, որ աղջիկը շատ ժամանակ մնայ տան մէջ նշանուած, ուստի հայրը ուղարկում է տղայի մօտ իւր աղքականներից մինը պ. Ղազար անուամբ և առաջարկում է նորան պսակուել, ասելով թէ այս անգամ ևս մերժես, նշանը յետ պիտի տամ: Տղան պատասխանում է, որ հարսնիքի պատրաստութեանց համար փող չունէ, այլ պէտք է, որ գնայ թէհրան այդ մասին: Բայց աղջկայ հայրը տեսնելով, որ այդպիսով երկու երեք տարի ևս յետաձգուելու է, պահանջում է, որ տղան մինչև մի փոքր ժամանակ գնէ այնքան դրամ բերէ, օրինակ 300 թուման, որ ինքն ապահով լինէ, թէ իւր աղջիկը քաղցած չէ մնալու, յաւելացնելով որ ինքն պատրաստ է մի առն ևս ընծայելու բնակութեան համար:

Շատ խօսակցութիւններից յետ, երբ տղան անկարողանում է աղջկայ հօր այդ օրինաւոր («») պահանջուել կատարել, պ. Է. Գ. խնդրում է Յ. քահանային, որ գոյ և նշանն յետ տանէ: Յ. քահանայն յայտնում է Անդրէաս Սրբազանին, և սա հրամայում է նրան գնալ առանձին խօսել աղջկայ հետ, թէ արդե՞ք օք աղջիկն աղջկին յօժար է թէ ոչ նշանը յետ տանուուն: Աղջիկը իւր մօր մօտ և առանձին յայտնում է, որ եթէ իւր հայրն ևս ստիպէ գնալու այն տղային, ինքն ամենեւին չէ յօժարելու: Սրբազանը տեսնելով իրաց այդ վիճակը, հրամայեց նշանը յետ տանել, բայց նախ աղջկաց հօրից առնելով 17 1/2 թուման, որ տղան ծախք էր արել իւր նշանադրութեան ժամանակ: Եթէ Սրբազան ևս չը հրամայէր նշանը յետ տանել, միթէ աղջկայ հայրը ինքն չէր կարող յետ ուղարկել, և միթէ բռնի պսակ կը լինի, միթէ Սրբազանի պարտաւորութիւնն չէ չը թողուլ, որ բռնի պսակներ լինեն: Դիցուք թէ Սրբազանն ևս ընդդիմանար հօր և աղջկան, բայց ինչ կարող էր առնել, ինչ իրաւամբ կարող էր ստիպել հօրը յետ չը տալ նշանը:

Ահա դորանից մի քանի ժամանակ յետոյ է պատահում, որ մի գերմանացի հեռագրատան մէջ ծառայողներ կայանում է և աղջկայ ձեռքը խընդրում: Հայրը իւր բոլոր բարեկամներին առաջ և, աղջկայ հաւանութիւնը և յօժարութիւնը ընդունելով, նշանում է գերմանացւոյ հետ, և մի քանի ժամանակից յետ բողոքական քաղաքիները պսակում են աղջկան:

Գալով Սրբազան Անդրէասի այդ հանց խին ներկայ գտանուելուն, մենք ապահովացնում ենք պ. Մ. Ն. ին, որ Սրբազանը ոչինչ չարժաւորիլ չունէր

